Արամ Վարդևանյան

/իրավաբանական գիտությունների թեկնածու/

Սեռը՝ արական

Տարիքը՝ 25-40

Ընդհանուր աշխատանքային ստաժը՝ 8

Ընդհանուր իրավաբանական ստաժը՝ 8

Հիմնական օրենսդրական բացը կալանքի այլընտրանքային միջոցի բացակայությունն է: Այլընտրանքային խափանման միջոցնե՞րը. որևիցե բացասական հատկանիշ չեմ կարող ընդգծել, քանի որ միջազգային փորձում Հայաստանի Հանրապետությունը կարծես միակ երկիրն է, որ մնացել է, որը բացառապես կալանավորումն է կիրառում որպես խափանմանման միջոցի հնարավորություն: Օրենսդրությամբ կիրառումն էլ նույնիսկ մեր օրենսդրության գործող կարգավորումների դեպքում կարող է կիրառվել բացառապես կալանավորման քննության միջնորդության շրջանակներում, այսինքն՝ այլ կերպ ասած չկալանավորված անձի նկատմամբ գրավ չի էլ կարող կիրառվել, որը նույնիսկ այդ պարագայում կարող էր արդյունավետ այլընտրանքային միջոց համարվել: Իսկ բացսական կողմը այլընտրանքային խափանման միջոցների գոյություն չունի: Այսինքն՝ միակ տրամաբանական բացասական կողմը կարող է լինել հնարավոր փախուստի, չներկայանալու ռիսկը, որն էլ միանշանակորեն միջազգային փորձը ցույց է տալիս, որ շատ հեշտ է և կարելի է լուծել տեխնիկական համապատասխան սարքավորումների միջոցով: Հետևաբար այլընտրանքային խափանման միջոցների բացասական կողմ ես չեմ տեսնում: Այսինքն՝ բոլոր այլընտրանքային խափանման միջոցները, բոլորն էլ դրական են: Նույնիսկ այն իրավիճակներում, որ մենք հիմա ենք գտնվում, ցանկացած այլընտրանքային միջոց լինելու է բացառապես դրական:

Կալանքի որոշում ստանալու համար հիմքերը պետք է հստակ լինեն։ Ենթադրություններ պետք է չլինեն, պետք է հստակ ապացույցներ լինեն քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի հիմքերի տեսանկյունից։ Այսօրվա օրենսդրությունը, նաև ՎՃռաբեկ դատարանի նախադեպային որոշումները թույլ են տալիս ենթադրությունների մակարդակում ներկայացնել, այսինքն՝ հնարավոր ապացույցների կանխատեսման մասին ենք մենք խոսում, ինչը որևէ կերպ պետք է ընդունելի չլինի։ Այսինքն, եթե ներկայացվում է հնարավոր խնդիր, որ անձը կարող է փախուստի դիմել, պետք է դրա վերաբերյալ լինի ապացույց։ Եթե խոսվում է նրա մասին, որ անձը կարող է խոչընդոտել, պետք է լինի դրա վերաբերյալ ապացույց։ Այսինքն՝ ձայնագրություն առ այն, որ անձը մեկ այլ անձի, ով գործով վկա է հանդիսանում, հորդորում է, որ վերջինս հանկարծ ցուցմունք չտա։ Այդ պետք է լինի ապացույցը և հիմքը որպեսզի կալանավորման խափանման միջոց ընտրվի, այլ ոչ թե ենթադրությունները, որ անձը, ըհը, հնարավոր է խոչընդոտի, հնարավոր է թաքնվի։ Մենք այդ ենթադրությունների մակարդակից պետք է անցնենք կոնկրետ ապացույցների, որի ապացուցման պարտականությունը, իհարկե, պետք է կրի նախաքննական մարմինը։

Այսպես թե այնպես, ի վերջո, կալանավորումը վերածվում է պատժիչ տարր կրող մի երևույթի Հայաստանի Հանրապետությունում, որը կրկին պայմանավորված է նրանով, որ մենք օրենսդրական լուրջ սահմանափակ կարգավորումներ ունենք, որոնք էապես պետք է վերանայվեն, էապես պետք է բարեփոխվեն։ Դե, իհարկե, դա որոշակի օբյեկտիվ հավելյալ ծախսեր են պարունակում՝ պահանջելով Հայաստանի Հանրապետության կառավարությունից, բայց, ես կարծում եմ, մենք դրա այլընտրանքը չունենք։ Տեսեք, մենք դեպքեր ունենք, որ անզգուշությամբ կատարված հանցագործության համար, անզգուշությա՛մբ կատարված, շեշտում եմ, խափանման միջոց է ընտրվում կալանավորումը։ Անձը կալանավորման ընթացքում գտնվում է, ենթադրենք, Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում, բայց այն ժամանակ, երբ վերջինիս նկատմամբ պատիժ է նշանակվում, այն կրվում է լրիվ այլ դատավարական

և քրեակատարառողական հստակ ռեժիմ պարունակող քրեակատարողական հիմնարկում՝ կիսափակ, կիսաբաց ռեժիմ պարունակող քրեակատարողական հիմնարկում: Այսինքն՝ անձը ավելի խիստ իրավիճակում է հայտնվում նախաքննական փուլում, իսկ պատժի կրման փուլում ավելի մեղմ: Սա ինքնին արդեն իրավական անոմալիա է, որը մինչ օրս, իհարկե, լուծում չի ստացել և երկար տարիներ այսպես արդեն ձևավորվել են: Սա իհարկե նաև իրավական ավանդույթի տեսանկյունից գնահատելու մասով պետք է օբյեկտիվորեն նշել, որ խնդիրը օրենսդրության մեջ է: Այնպես չէ, որ կարող են ընտրել այլ խափանման միջոց: Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը, ըստ էության, իհարկե շատ նվազ իրավական ապահովագրում է տալիս նախաքննական մարմնի համար: Այսինքն՝ կալանավորման այլընտրանք գոյություն չունի: Օրինակ՝ տնային կալանք մենք մինչ օրս չունենք: Մենք մարդուն պարտադիր պետք է տեղափոխենք քրեակատարողական հիմնարկ: Դժվար է ասել՝ ինչու չունենք: Բայց չունենք, փաստն է այդպես: Չկա ազատության սահմանափակումը, որ անձը ասենք X ծավալով միջավայրից չի կարող դուրս գալ: Դա տնային կալանքի տեսակն է: Չունենք: Օրենսդրությամբ չկա մինչ օրս:

Պատժի նպատակ ունի, անխուսափելիորեն: Իմ բերած օրինակի դեպքում այլ կերպ լինել չի էլ կարող լինել: Միանշանակ այդպես է ստացվում:

Պատկերացրեք, ամենահայտնի դեպքը, որը բոլորը տեսել են, նկատել ենք, դա Վարդան Պետրոսյանի հայտնի գործն էր: Կալանավորումը վերածվեց պատժիչ միջոցի, որը կրկին պայմանավորված է նրանով, որ օրենսդրական լուրջ սահմանափակ կարգավորումներ ունենք, որոնք պետք է վերանայվեն, բարեփոխվեն, այլ երկրների փորձը կիրառվեն: Կալանավորումներն էլ է ծախսեր պահանջում, այլընտրանքային խափանման միջոցների նորովի կրառությունն էլ, գուցեև ավելի ծախսեր է պահանջում Հայաստանի Հանրապետության կառավարությունից, բայց, ես կարծում եմ, դա ժամանակի հրամայականն է, այլընտրանքը չունենք: Տեսեք, մենք դեպք ունենք, որ անզգուշությամբ կատարված հանցագործություն էր Վարդան

Պետրոսյանի պարագայում, ճանաչված մարդ, դիտավորություն չկա, անզգուշությամբ կատարված հանցանք: Խափանման միջոց ընտրվեց կալանավորումը: Բա սա պատժի նպատակ չէր հետապնդո՞ւմ: Նվաստացուցիչ պայմաններում, անձը նվաստացնող պայմաններում: Հետագայում պատիժը կրելու պայմանները անհամեմատ ավելի թեթև էր, քան նախնական կալանքի դեպքում:

Իհարկե ամենակարևորը, որ հիմնավորված լինեն, ենթադրություններով միջնորդություն չներկայացվեն, անհրաժեշտ հիմքեր ունենան, ապա դատարան միջնորդություն ներկայացնեն:

Ավանդաբար ընդունված կետերը թվարկելով՝ միջնորդություն է ներկայացվում, չի անհատականացվում, չի հիմնավորվում, քանի որ այլընտրանքայիններն էլ չի կիրառվում: Բայց պետք է ասեմ, որ վերջերս այդ հարցում տեղաշարժ նկատվում է: Գրավը՝ որպես խափանման միջոց, կիրառվում է, բայց այն առանձին չի գործում, դարձյալ որպես կալանավորման այլընտրանք է կատարվում:

Իրավական ի՞նչ հետևանք պետք է ունենա, անձի ազատության սահմանափակում:

Խուսափում են այլընտրանքայի խափանման միջոցներից, որովհետև դրանք չկան, ինքնուրույն չկան:

Դարձյալ պետք է ասեմ, որ այլ երկրներում տնային կալանքը կայացած խափանման միջոց է, և ես շատ լավ կարծիքի եմ, բայց այն ծախսատար կլինի պետության համար, որովհետև դա էլեկտրոնային հսկողությամբ պետք է իրականացվի: Վարչական հսկողությունն էլ կարելի է արդիականացնել տնային կալանքի նման, սահմանվի ինչ-որ սահմանափակումներ, բայց գոնե ՔԿՀ-ների այդ վատ պայմաններում չեն փակվի, չեն կտրվի աշխատանքից, ընտանիքից, ընկերներից: Ո՛չ օրենսդրական չափանիշներին, ո՛չ արտասահմանյան չափանիշներին, ո՛չ մարդկային չափանիշներին չեն համապատասխանում քրեակատարողական

հիմնարկների պայմանները, հատկապես Նուբարաշենի ՔԿՀ-ն։ Դա խորհրդային ժամանակներից մնացած խայտառակություն է։ Այն ընդհանրապես պիտի փակվի։ Արմավիրինը՝ ոչինչ վատ չի։

Անչափահասների պարագայում մի քիչ մեղմ է, որովհետև կա խափանման մի միջոց՝ ծնողների վերահսկողությունը և բացի դա, անչափահասի հետ գործ ունենք։ Ոչ միայն անչափահասների դեպքում, այլև ընդհանրապես, պետք է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառվի միայն առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում, անգամ ծանրի դեպքում միայն բացառիկ դեպքերում, անհատականացված։

Գրավի կրառման օրենսդրական կարգավորումը բավարար չէ և կրում է սուբյեկտիվ բնույթ։ Սուբյեկտիվ էլեմենտներ միանշանակ է պարունակում, որը շատ վտանգավոր է և այդպես չպետք է լինի, պետք է չլինի։ Պետք է գրավի բացառման հանգամանքները, այսինքն՝ երբ չի կարող գրավը կիրառվել, հստակ սահմանված է և ըստ դրա առաջնորդվում են՝ դրանով ավելի կանխատեսելի դարձնելով գրավի ինստիտուտը։

Գրավի չափերը, ըստ էության, պետք է լինեն ոչ ցածր, միջազգային փորձն է այդպիսին։ Գրավը, իսկապես, լուրջ պարտականություն պետք է դնի անձի վրա, որ դրանով էլ ապահովի իր պատշաճ վարքագիծը։ Եվ ենթադրենք, որ դեպքը վերաբերումա յուրացմանը, վատնմանը կամ տնտեսական բնույթի հանցագործություններին, ապա ենթադրյալ այդ վնասի պատճառած վնասի չափից բխեցնելով, պետք է որոշենք գրավի չափը, այլ ոչ ըստ իրավիճակի, ըստ անձի հնարավորությունների և այլն։ Ենթադրենք, եթե անձին մեղադրանք է առաջադրվում հարյուր միլիոն դրամ պատճառված վնասի, ապա առնվազն գրավի գումարը պետք է սկսվի, ենթադրենք, հիսուն միլիոնից։ Այսինքն դա որպես ելակետային միավոր պետք է հանդիսանա։

Ըստ էության՝ գրեթե բոլոր հարցերը տվեցիք, որոնք կարող էին վերաբերել խնդրին, երևի թե միակ հանգամանքը, որ կարելի է նշել, իսկապես կալանավորումը զուտ հանդիսանում է անձի պատշաճ վարքագիծը ապահովելու գործիք, այլ ոչ որևէ այլ նպատակ հետապնդող: Խոսքը գնում է նրա մասին, որ մենք գործ ունենք ոչ թե կալանավորման ընթացքում անձի մեղավորության հարցը բացահայտելու հետ, այլ պարզապես իր պատշաճ վարքագիծը ապահովելու, որը որևէ կերպ չպետք է նույնացվի անձի և արդեն իսկ մեղավորության հանգամանքի հետ: Անմեղության կանխավարկածի ռեժիմում ենք գտնվում ողջ նախաքննության և դատաքննության ընթացքում: Հետևաբար անձի նկատմամբ անձնական ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակում պետք է լինի միայն այն դեպքում, երբ մենք ունենք պատշաճ վարքագիծը ապահովելու խնդիր, այն էլ հստակ ապացուցելով, այլ ոչ թե ենթադրելով:

Շնորհակալություն